ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ МАРГАРЫ

ՀՀ Արմավիրի
մարզի մարզպետ
Պարոն Ա.Ղահրամանյանին

«18» նոյեմբերի 2011թ.
Թիվ 99

Հարգելի Պարոն Ղահրամանյան՝

Ձեզ ենք ներկայացնում Մարգարայի գյուղական համայնքի ավագանու 18.11.2011թ. կայացած թիվ 12 հերթական նիստի որոշումը:

Առդիր՝ 10 էջ:

ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ.ԱՍԱՏՐՅԱՆ/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10983-11
«22» 11 2011 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 18 » նոյեմբերի 2011թ. — № 12 նիստի

№ 01 որոշում

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ի  Հ Ա Ս Տ Ա Տ Մ Ա Ն  Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Մարգարայի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 1. Առաքելյան Խաչատուր Բաբկենի | | | |
| 2. Ասատրյան Վազգեն Ռաֆիկի | | | |
| 3. Արամյան Արմեն Զավենի | | | |
| 4. Հարությունյան Ալբերտ Վրեժի | | | |
| 5. Մանուկյան Պետիկ Սերոբի | | | |
| 6. Մարգարյան Գայանե Վարդգեսի | | | |

Մարգարայի գյուղական
համայնքի ղեկավար՝ /Խ. Ասատրյան/

2011 թվական նոյեմբերի 18
Գ. Մարգարա

Հավելված N⁰ 1
Արմավիրի մարզի
Մարգարայի գյուղական համայնքի
ավագանու N⁰ 12 հերթական նիստի
2011 թվականի նոյեմբերի 18-ի
թիվ 1 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. Օրակարգի հաստատում
Զեկ.՝ Խ.Ասատրյան

2. Մարգարա գյուղական համայնքի 2012 թվականի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը» սահմանելու հարցը: Զեկ.՝ Խ.Ասատրյան

3.Մարգարայի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և իր ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատողների 2012 թվականի հաստիկացուցակը թվաքանակը և դրույքաչափը հաստատելու հարցը: Զեկ.՝ Խ.Ասատրյան

4. Մարգարայի գյուղական համայնքի զույքագրման հանձնաժողովի զույքագրման արդյունքների հարցը: Զեկ.՝ Խ.Ասատրյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 18 » նոյեմբերի 2011թ. № 12 նիստի
№ 02-Ն որոշում

# ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով 1-ին մասի 18-րդ կետով.*

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Մարգարայի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 1.Առաքելյան Խաչատուր Բաբկենի | | | |
| 2.Աստրյան Վազգեն Ռաֆիկի | | | |
| 3.Արամյան Արմեն Զավենի | | | |
| 4.Հարությունյան Ալբերտ Վրեժի | | | |
| 5.Մանուկյան Պետիկ Սերոբի | | | |
| 6.Մարգարյան Գայանե Վարդգեսի | | | |

Մարգարայի գյուղական համայնքի ղեկավար՝ /Խ. Աստրյան/

Հավելված N⁰ 1
Արմավիրի մարզի Մարգարա
գյուղական համայնքի ավագանու
N⁰12 հերթական նիստի
2011 թվականի նոյեմբերի 18-ի
թիվ 2-Ն որոշման

# Մարգարայի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1.հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 4500դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 9000դրամ

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 21000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 900 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 900 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակուեան փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կաս սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ

նքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ.

բ)բնական գազի լցակայանի, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000դրամ

գ) այլ ապրանքների (այդ թվում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի) վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 25000 դրամ.

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50.000 դրամ.

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

| | |
|---|---|
| ա) առևտրի օբյեկտների համար | 25 000 դրամ. |
| բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 50 000 դրամ. |
| գ) բաղնիքների (սաունաների) համար | 200000 դրամ. |
| դ) խաղատների կազմակերպման համար | 500000դրամ |
| ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ | 250000 դրամ. |
| զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ | 100000 դրամ. |

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 00 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է: 50 00 դրամ:

10. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ:

11. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ:

12. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 18 » նոյեմբերի 2011թ.

№ 12 նիստի
№ 03 որոշում

## ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԻՐ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.*

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1.Հաստատել Մարգարա համայքի ղեկավարի աշխատակազմի և իր ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

| | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 7. Առաքելյան Խաչատուր Բաբկենի | | | |
| 8. Ասատրյան Վազգեն Ռաֆիկի | | | |
| 9. Արամյան Արմեն Զավենի | | | |
| 10. Հարությունյան Ալբերտ Վրեժի | | | |
| 11. Մանուկյան Պետիկ Սերոբի | | | |
| 12. Մարգարյան Գայանե Վարդգեսի | | | |

Համայնքի ղեկավար՝ /Խ. Ասատրյան/

2011 թվական գյուղ Մարգարա

Արմավիրի մարզի
Մարգարայի գյուղական համայնքի
ավագանու N° 12 հերթական նիստի
2011 թվականի նոյեմբերի 18-ի
թիվ 2 որոշման

# ՑՈՒՑԱԿ

**Մարգարայի գյուղական համայքի ղեկավարի աշխատակազմի և իր ենթակայության հիմնարկների աշխատողների 2012 թվականի դրույքի և աշխատավարձի չափերի**

| գյուղապետարան` | դրույք | աշխատավարձի չափ /դրամ/ |
|---|---|---|
| 1.Գյուղապետ | 1 | 170.0 |
| 2.Գյուղապետի տեղակալ | 1 | 93.0 |
| 3.Աշխատակազմի քարտուղար | 1 | 92.0 |
| 4.Առաջատար մասնագետ | 1 | 90.0 |
| 5.Առաջին կարգի մասնագետ | 1 | 65.0 |
| 6.Առաջին կարգի մասնագետ | 1 | 65.0 |
| 7.Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 64.0 |
| 8.Գործավար քարտուղարուհի | 1 | 32.5 |
| 9.Յավաքարար | 1 | 35.0 |
| Ընդհամենը | | 706.5 |
| Գրադարան` | | |
| 1.Գրադարանի վարիչ | 1 | 32.5 |
| Մշակույթի տուն` | | |
| 1.Մշակույթի տան տնօրեն | 1 | 32.5 |
| Ընդհամենը հաստիկացուցակով | | 771.5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 18 » նոյեմբերի 2011թ. — № 12 նիստի

№ 04 որոշում

# ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով*

*«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածով.*

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Թույլատրել՝ Մարգարա գյուղական համայնքի և բյուջետային հիմնարկներում 2011 թվականի գույքագրման հանձնաժողովի նոյեմբերի 01-05-ը կատարված ստուգման արդյունքներում հայտնաբերած՝ գյուղապետարանի և իր ենթակայության բյուջետային հիմնարկներում կան ապրանքանյութական արժեքներ, որոնք հետագա շահագործման պիտանի չեն՝ որպես ոչ պիտանի ապրանքանյութական արժեքներ դուրս գրել՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 1.Առաքելյան Խաչատուր Բաբկենի | | | |
| 2.Ասատրյան Վազգեն Ռաֆիկի | | | |
| 3.Արամյան Արմեն Ջավենի | | | |
| 4.Հարությունյան Ալբերտ Վրեժի | | | |
| 5.Մանուկյան Պետիկ Սերոբի | | | |
| 6.Մարգարյան Գայանե Վարդգեսի | | | |

Մարգարայի գյուղական
համայնքի ղեկավար՝ /Խ. Ասատրյան/

Հավելված N° 1
Արմավիրի մարզի
Մարգարայի գյուղական համայնքի
ավագանու N° 12 հերթական նիստի
2011 թվականի նոյեմբերի 18-ի
թիվ 04 որոշման

ՑՈՒՑԱԿ
Գյուղապետարանի և բյուջետային հիմնարկների դուրս գրված ապրանքների

| h/h | անվանումը | չափի միավոր | գումարը /դրամ/ | շահագործման թվականը |
|---|---|---|---|---|
| | ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ | | | |
| 1 | Ջրամղիչ աշտարակ | 1 հատ | 20000 | 1968 |
| 2 | Ջրամատակարարման համակարգ | 1 հատ | 1,449670 | 1964 |
| 3 | աթոռներ | 1 հատ | 30000 | 2005 |
| 4 | հեռախոս | 1 հատ | 200 | 1984 |
| 5 | սեղանի կոմպլեկտ | 3 հատ | 15000 | 2009 |
| 6 | պայուսակ | 1 հատ | 7000 | 2009 |
| 7 | հաշվիչ | 1 հատ | 5000 | 2010 |
| | ընդամենը | | 1526870 | |
| | ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ | | | |
| 1 | վիշիլկա | 1 հատ | 269,00 | 1985 |
| 2 | կռեսլո | 150 հատ | 44400 | 1978 |
| 3 | ռադիոհանգույց | 1 հատ | 8856 | 1974 |
| 4 | ռադիոլա«Էստոնիա» | 1 հատ | 15400 | 1985 |
| 5 | էլեկտրաֆոն «Լիդեր» | 1 հատ | 2695 | 1984 |
| 6 | ռադիոլա «Ուրալ 112» | 1 հատ | 2387 | 1978 |
| 7 | ուսիլիտել «Սոլիստ» | 1 հատ | 39000 | 1985 |
| | ընդամենը | | 113007 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏՈՎ | | 1639877 | |